Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
օգոստոսի 24-ի նիստի N 36
արձանագրային որոշման

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

I. ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ

1. Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգը մշակել է Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը:

II. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2. Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգի նպատակն է նպաստել ոլորտի կայուն զարգացմանը՝ վեր հանելով առկա խնդիրները՝ հիմք հանդիսանալով հանքարդյանբերության ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակման համար: Հայեցակարգում նախ ներկայացված է հանքարդյունաբերության ներկա իրավիճակը, անդրադարձ է կատարված առկա խնդիրներին, որոնք խմբավորվել են ութ հիմնական խմբերի մեջ, տրվել են այդ խնդիրների լուծման հնարավոր ուղղությունները: Հայեցակարգով ամրագրվել է, որ ներկայացված խնդիրների լուծման և ոլորտի հետագա կայուն զարգացման, ինչպես նաև միջազգային շուկայում Հայաստանը ներկայացնելու համար անհրաժեշտ է մշակել և ներդնել հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն և ռազմավարություն՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին: Ռազմավարական գործողություններն ամրագրելու համար պետք է նախապես իրականացնել որոշ ախտորոշիչ ուսումնասիրություններ և վերանայել արդեն առկա հետազոտությունները: Ռազմավարության մշակման համար կպահանջվի 1-1.5 տարի և այն կիրականացվի Համաշխարհային բանկի և դոնոր կազմակերպությունների կողմից տրվող դրամաշնորհների հաշվին:

III. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

3. Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի առկա վիճակի վերլուծությունից հետևում է, որ ոլորտը որպես արտահանումից ստացվող եկամուտների, արտարժութային ներհոսքի, օտարերկրյա ուղղակի ներդրումների և համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման աղբյուր, կարևոր կշիռ ունի ազգային տնտեսության մեջ՝ ապահովելով բարձր հարկային եկամուտներ:

4. Ներկայումս համաշխարհային ապրանքային շուկաները անկում են ապրում, ընդհանուր առմամբ մետաղների գներն ընկել են և պահանջարկի մակարդակը ցածր է: Սակայն հանքարդյունաբերության ոլորտը ցիկլային է և վաղ թե ուշ շուկան վերելք կունենա և ի հայտ կգան նոր ներդրումներ: Այս առումով կարևորվում է հանքարդյունաբերության

ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի կատարելագործումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոլորտի զարգացման ներկա փուլում չափազանց կարևոր է ունենալ կայուն, պարզ և թափանցիկ իրավական դաշտ: Իսկ ոլորտին առնչվող օրենքներում առկա բացերը նվազագույնի հասցնելու, միջազգային լավագույն փորձին մոտեցնելու և ոլորտի կայուն զարգացումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է ունենալ համապարփակ քաղաքականություն, որը թույլ կտա ի հայտ բերել համեմատական առավելությունները: Այժմ բարենպաստ պահ է հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակման համար: Սա կապահովի, որ զարգացման և ներդրումների հաջորդ ալիքի ժամանակ Հայաստանը լավ պատրաստված լինի այն մարտահրավերներն ու հնարավորությունները կառավարելու համար, որոնք ի հայտ կգան այդ փուլում:

5. Հանքարդյունաբերության ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման համար անհրաժեշտ գրեթե բոլոր օրենքները և այլ իրավական ակտերը ընդունված են, որոնք բավական համակողմանի ու հավակնոտ են, սակայն կարգավորման համակարգը տուժում է անորոշության և տարբեր օրենքների միջև անհամապատասխանության պատճառով (օրինակ՝ «մեկ պատուհանի» սկզբունքի ոչ լիարժեք կիրառման հնարավորությունները, արդյունահանման նախագծերի օրենսդրությամբ սահմանված փորձաքննության իրականացման և ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման նպատակով որոշումների կայացման ժամկետների անհամապատասխանությունը, ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողօգտագործման իրավունքի տրամադրման օրենսդրական հակասությունները՝ գործընթացը չի հենվում փոխհատուցման և տարաբնակեցման հարցերում հողի սեփականատերերի և հողօգտագործողների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային լավագույն փորձի վրա և այլն), որը ոլորտի կազմակերպված ու կայուն զարգացմանը խոչընդոտող ամենակարևոր գործոնն է: Իրավական դաշտի կատարելագործման և ոլորտի կայուն զարգացումը ապահովելու համար անհրաժեշտություն է առաջանում հիմնվելով միջազգային լավագույն փորձին՝ ընդունել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգ, որը կարող է ծառայել որպես ելակետ համապարփակ քաղաքականության մշակման և իրավական դաշտի ուսումնասիրման ու լրամշակման համար: Օրինակ, Լաոսում հանքարդյունաբերության ոլորտի զարգացումը դիտարկվում է հետևյալ քայլերի իրականացման ապահովմամբ՝ «լավ» կառավարման և թափանցիկության սկզբունքների ներդրմամբ, հանքարդյունահանման ծավալների ավելացմամբ՝ միաժամանակ բարձրացնելով բնապահպանական կյունությունը, հանքանյութի արտահանման ծավալների նվազեցմամբ՝ փոխարենը հանքային արտադրատեսակների վերամշակման խթանմամբ, պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովմամբ: Իսկ Շվեդիայի հանքարդյունաբերության զարգացումը դիտարկվում է օգտակար հանածոների պաշարների երկարաժամկետ կայուն եղանակով օգտագործմամբ՝ հաշվի առնելով բնապահպանական- սոցիալական և մշակութային տիրույթները:

6. Հանքարդյունաբերությունը մեծ ազդեցություն ունի երկրի սոցիալական, բնապահպանական և առողջապահական ոլորտների վրա ինչպես դրական, այնպես էլ բացասական իմաստով: Դրական ազդեցությունն այն է, որ այն ստեղծում է աշխատատեղեր մարզերում՝ ապահովելով համեմատաբար բարձր եկամուտներ գյուղական

համայնքների բնակչության համար: Տեղական բյուջեներ վճարված հարկերի շնորհիվ այն նաև հնարավորություններ է տալիս ազդակիր համայնքներին լուծել համայնքների առջև ծառացած խնդիրները: Սակայն դրան զուգահեռ, ոչ պատշաճ գործունեության արդյունքում հանքարդյունաբերությունը ստեղծել և շարունակում է ստեղծել բնապահպանական ու առողջապահական խնդիրներ: Քաղաքացիական հասարակության կողմից պարբերաբար բարձրաձայնվում են ոլորտի վերաբերյալ խնդիրներ, որոնք պահանջում են լուծումներ: Միջազգային ասպարեզում պարբերաբար առաջարկվում են ոլորտի կարգավորման նոր մոտեցումներ, մեխանիզմներ և տեխնոլոգիաներ՝ բնապահպանական ոլորտի օրենսդրությամբ սահմանված պահանջների վերանայում, ընդերքօգտագործման թափոնների կրկնակի վերամշակման հնարավորությունների ստեղծում, օգտակար հանածոների արդյունահանված տարածքների վերականգնման և ընդերքօգտագործման թափոնների կառավարման մեխանիզմների կատարելագործում, որոնք թույլ են տալիս ապահովել հանքարդյունաբերության կայուն զարգացում, այն է տնտեսական, սոցիալական և բնապահպանական կայունություն:

7. 2016 թվականի հուլիսին Համաշխարհային Բանկը հրապարակեց «Հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարական գնահատում. Հայաստան» զեկույցը, որտեղ ներկայացված առաջարկությունների մեջ հատկապես առանձնացված էր ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակման անհրաժեշտությունը: Քաղաքականության մշակման անհրաժեշտության մասին պարբերաբար խոսում են նաև միջազգային մյուս կազմակերպությունները: Արդյունահող Ճյուղերի Թափանցիկության Նախաձեռնության շրջանակներում ձևավորված բազմաշահառու խումբը, որն իր մեջ ներառում է Կառավարության, քաղաքացիական հասարակության և ընդերքօգտագործողների ներկայացուցիչների, իր աշխատանքային ծրագրում նույնպես կարևորել է ոլորտի վերաբերյալ ընդհանուր ռազմավարության ձևավորման անհրաժեշտությունը:

8. Օրինակ Կանադան, Շվեդիայի Թագավորությունը, Ավստրալական Միությունը, Կոսովոն և Սիերա Լեոնեն այն երկրներն են, որտեղ հանքարդյունաբերության ոլորտում վարած քաղաքականության՝ բնապահպանական, սոցիալական և տնտեսական հիմնահարցերի համակցման և համակարգված գործողությունների շնորհիվ հանքարդյունաբերության կայուն զարագացման հարցում տվել են դրական արդյունքներ, իսկ Շվեդայի Թագավորությունը դարձել է Եվրոպական Միության տարածքում առաջատար հանքարդյունաբերական պետություն: Օրինակ՝ Շվեդիայի Թագավորությունում բնապահպանական (և սոցիալական) պահանջների խստացման պայմաններում փոքր ընկերությունների համար ավելի է դժվարացել օրենսդրությամբ սահմանված պահանջների ապահովումը, չնայած այդ ընկերությունները շարունակում են աշխատել շահույթով:

9. Հաշվի առնելով ոլորտի կարգավորման անհրաժեշտությունը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016 թվականի նոյեմբերի 23-ի N1092-Ա որոշմամբ ձևավորվել է աշխատանքային խումբ, որն էլ մշակել է Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգը:

IV. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

10. Հայաստանը հարուստ է տարատեսակ մետաղական և ոչ մետաղական հանքանյութերով: Հայաստանի Հանրապետության ընդերքը պարունակում է մետաղական օգտակար հանածոների հետևյալ հիմնական տեսակները՝ երկաթ, պղինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, ոսկի, արծաթ, ալյումին: Հաշվառված հանքավայրերի հանքաքարերում բացի հիմնական մետաղներից առկա են հազվագյուտ և ցրված տարրեր՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, ինդիում, գալիում, թալիում, բիսմութ և այլն:

11. Հայաստանում հանդիպում են հայտնի համարյա բոլոր տեսակի հանքանյութային ապարները: Հատուկ արժեք ու նշանակություն են ներկայացնում հրաբխային պրոցեսների արդյունքում առաջացած լեռնային ապարները, որոնցից են՝ տուֆերը, պեռլիտները, պեմզաները, ցեոլիտները, հրաբխային խարամները և այլն, զգալի են նաև բազալտների, գրանիտների, նեֆելինային սիենիտների, մարմարների պաշարների ծավալները: Վերջիններիս արդյունահանման համար տրված թույլտվությունների գերակշռող մասը նախատեսված է շինարարական քարերի, լցանյութերի կամ բազմանպատակային օգտագործվող այլ նյութերի համար:

12. Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերվել, գնահատվել և օգտակար հանածոյի պետական հաշվեկշռում հաշվառված են ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի հանքավայրերի պաշարներ, որոնք բավարար են տնտեսության զարգացումն ապահովելու համար:

13. Հայաստանում առկա են վառելիքաէներգետիկ հումքի աղբյուր հանդիսացող այրվող թերթաքարերի երևակումներ և ածխի պաշարներ:

14. 2017թ. հունվարի 1-ի դրությամբ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրվել է 431 իրավունք, որոնցից 27-ը մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման, 1-ը՝ ածխի, 403-ը՝ ոչ մետաղական հանածոների: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրվել է 30 իրավունք, որոնցից 21-ը մետաղական օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության համար:

15. Նույն ժամանակահատվածի դրությամբ հանրապետության տարածքը նավթի և գազի հետախուզման համար բաժանված է թվով 6 պայմանական տարածքների, որոնցում օտարերկրա 3 կազմակերպությունների կողմից իրականացվում են երկրաբանա-հետախուզական աշխատանքներ:

16. ՀՀ Սյունիքի մարզի տարածքում ընդերքի ջերմության էներգետիկ օգտագործման համար երկրաջերմային էներգետիկայի տեսանկյունից հեռանկարայնությունը պարզելու նպատակով իրականացվում են հետազոտական աշխատանքներ: Ներկայումս հորատվել են 2 հետախուզական հորատանցքեր՝ համապատասխանաբար 1500մ և 1800մ խորությամբ:

17. 2015 թվականին հանքարդյունաբերության մասնաբաժինը ընդհանուր արտահան-ման մեջ կազմել է 31.1% , իսկ ՀՆԱ-ի մեջ՝ 2.1%:

18. 2010-2015 թվականների ընթացքում հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից վճարված հարկերը կազմել են տարեկան շուրջ 40 մլրդ. դրամ (մանրամասները տես Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում):

Աղյուսակ 1

ՀՀ հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից վճարված հարկերը, մլն. դրամ[1]

Տարի	Ընդամենը հարկային վճարներ	Ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)	Անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	Այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
2010	18 197	6 326	5 423	6 447
2011	37 516	18 959	9 392	9 164
2012	44 694	17 556	11 853	15 284
2013	54 458	24 344	10 072	20 042
2014	40 869	17 353	10 474	13 042
2015	45 724	17 972	8 508	19 244
2010-2015թթ. միջին՝	**40 243**	**17 085**	**9 287**	**13 870**

Աղյուսակ 2

ՀՀ հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից վճարված հարկերի մասնաբաժինը ընդհանուր հարկային եկամուտներում՝ տոկոս

Տարի	Ընդամենը հարկային վճարներ	Ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)	Անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	Այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
1	**2**	**3**	**4**	**5**
2010	2.5	0.9	0.8	0.9
2011	4.7	2.4	1.2	1.1
2012	5.0	2.0	1.3	1.7
2013	5.3	2.4	1.0	2.0
2014	3.8	1.6	1.0	1.2
2015	4.2	1.6	0.8	1.8
2010-2015թթ. միջին՝	**4.25**	**1.81**	**1.00**	**1.45**

19. 2010-2015թթ. ՀՆԱ-ի արտադրության մեջ հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործումը մինչինը կազմել է 2.5 տոկոս: Տեղեկատվությունն ըստ տարիների ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Հանքագործական արդյունաբերության և բացհանքերի շահագործման մասնաբաժինը ՀՆԱ-ում[2]

[1] Տվյալները հաշվարկված են ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հրապարակվող առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի և տուրքերի մեծությունների վերաբերյալ տեղեկատվական ցանկերի հիման վրա

[2] Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների
ardzanagrayinNrq017

	2010	2011	2012	2013	2014	2015
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	2.6	2.7	2.7	2.3	2.1	2.1

20. Հանքարդյունաբերությունը էական մասնակցություն ունի ՀՀ արտահանման մեջ: Վերջին վեց տարիների ընթացքում այն կազմել է 2.38 մլրդ ԱՄՆ դոլար: 2010-2015թթ. ընթացքում արտահանված պղնձի, կապարի, ցինկի, մոլիբդենի և թանկարժեք մետաղների ծավալներն են ու ֆինանսական մուտքերը ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Տարեկան արդյունահանված մետաղական օգտակար հանածոների արտահանված ծավալները և դոլարային մուտքերը[3]

Օգտակար հանածո	2010		2011		2012		2013		2014		2015	
	Ծավալը-տոննա	Արժեքը-ԱՄՆ դոլար-հազ.	Ծավալը-տոննա	Արժեքը-ԱՄՆ դոլար-հազ.	Ծավալը-տոննա	Արժեքը-ԱՄՆ դոլար-հազ.	Ծավալը-տոննա	Արժեքը-ԱՄՆ դոլար-հազ.	Ծավալը-տոննա	Արժեքը-ԱՄՆ դոլար-հազ.	Ծավալը-տոննա	Արժեքը-ԱՄՆ դոլար-հազ.
Պղնձի հանքաքար, խտանյութ	115 964.3	210 646	118 332.5	260 553	131 458.9	227 580	173 207.2	279 915	185 089.4	235 872	309 183.7	316 636
Կապարի հանքաքար խտանյութ	19.8	17			87	168						
Ցինկի հանքաքար խտանյութ	15895.5	13739	14888	13897	17196.6	17716	17937.8	16905	14338.2	13814	14137.2	12021
Մոլիբդենի հանքաքար խտանյութ	300	3754	860	11129	780.9	8299	780	6651	900.0	8740	959.7	5763
Թանկարժեք մետաղի հանքաքար խտանյութ	245.9	546	62.4	164	3571.4	24936	0.03	0.140	5802.4	32718	6497.0	31562

[3] Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների
ardzanagrayinNrq017

21.Հանքարդյունաբերությունն էական մասնակցություն ունի նաև մարզերում աշխատատեղերի ապահովման գործում: Վերջին 6 տարիների ընթացքում ոլորտում զբաղվածների թիվը միջին հաշվով կազմել է շուրջ 9600 մարդ:

Աղյուսակ 5

2010-2015թթ. Ընդերքօգտագործման ոլորտում զբաղվածությունը (հազ.մարդ)

	2010	**2011**	**2012**	**2013**	**2014**	**2015**
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	11.0	10.4	10.0	9.4	7.9	9.3

22. Հանքարդյունաբերության ոլորտի իրավահարաբերությունները հիմնականում կարգավորվում են 2012թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած, Համաշխարհային Բանկի փորձագետների աջակցությամբ մշակած՝ միջազգային լավագույն փորձին համահունչ ՀՀ Ընդերքի մասին նոր օրենսգրքով, որով սահմանվել են նոր հիմնական սկզբունքներ և մոտեցումներ, մասնավորապես՝ երկրաբանական տեղեկության մատչելիության բարձրացում և անվճար տրամադրում, ընդերքօգտագործման թույլտվությունների ստացման նպատակով հայտերի ընդունման ժամանակ «Մեկ պատուհանի» սկզբունքի կիրառում, օգտակար հանածոների բոլոր տեսակների երկրաբանական ուսումնասիրության և շահագործման նպատակով թույլտվությունների տրման գործընթացներին միանման մոտեցման ցուցաբերում՝ առանց մրցույթի և աճուրդի: Սահմանվել են ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպության ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունների ներկայացման, ինչպես նաև ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին ընդերքօգտագործման իրավունք ստացած կազմակերպության մասնակցության պահանջները: Նախատեսվել է օգտակար հանածոների արդյունահանման հայտերի հետ միաժամանակ ներկայացնել նաև հանքի փակման նախնական ծրագիր, որը ներառում է նաև աշխատուժի մեղմացման և մոնիթորինգի իրականացման ծրագերը: Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի հետ միասին մեկ փաթեթով ընդունվել է նաև «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխությունների կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի համաձայն վերանայվել է մետաղական օգտակար հանածոների իրացման համար վճարվող բնօգտագործման վճարների՝ ռոյալթիների հաշվարկման և վճարման ընթացակարգերը:

23. Իսկ 2016 թվականի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին օրենսգրքում կատարվել են լրացումներ և փոփոխություններ՝ սահմանելով ընդերքօգտագործման թափոնների և դրանց օբյեկտների կառավարման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման պահանջները:

24. Օրենսդրական դաշտում կատարվել է մեծ աշխատանք, սակայն այն դեռևս լիովին չի արտացոլում ոլորտի կարգավորման ժամանակակից մոտեցումները: Անհրաժեշտ է միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա մշակել համակարգված գործողությունների պլան հանքարդյունաբերության ոլորտի օրենսդրության փոփոխության համար:

25. Չնայած առկա դրական փոփոխություններին և տնտեսության մեջ ունեցած դերին, պետք է նշել, որ հանքարդյունաբերության ոլորտը չի ապահովում շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման պահանջները՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով: Կայուն է համարվում հանքարդյունաբերության այն ոլորտը, որը համահունչ է կայունության բոլոր երեք բաղադրիչներին (բնապահպանական, սոցիալական և տնտեսական): Շրջակա միջավայրի վրա ներգործությունը պետք է ընդերքօգտագործողների կողմից պատշաճ կառավարվի, իսկ նրանց գործունեությունը չպետք է նշանակալի ռիսկ առաջացնի հարակից համայնքների կամ հողօգտագործողների համար պոչամբարների պատահական արտահոսքի կամ լեռնատեխնիկական վթարի հետևանքով: Ինչ վերաբերում է սոցիալական հարցերին, ապա տեղական բնակչությունը պետք է ակտիվ մասնակցություն ունենա ընդերքօգտագործման աշխատանքներին («սոցիալական արտոնագիր»):

26. Արտադրության ծավալների և ստեղծվող արժեքի առումով ոլորտում գերիշխում է մեկ կազմակերպություն՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ԶՊՄԿ): Փոքր է այն հանքերի թիվը, որոնք կարող են համարվել միջին: Մետաղական և ոչ մետաղական հանածոների արդյունահանման բնագավառում շատ են փոքր հանքերը, որոնց ազդեցությունը ազգային բարեկեցության վրա բավականին աննշան է: Եթե հանքարդյունաբերության ոլորտում գերիշխեին մեկից ավելի մեծ հանքեր, ապա հնարավոր արտաքին ցնցումների (միջազգային շուկայում՝ հատկապես մետաղների գների տատանումներ) նկատմամբ զգայունությունը ավելի ցածր կլիներ ի հաշիվ ընկերությունների վարած ներքին քաղաքականության, սակայն ընդամենը մեկ խոշոր հանքի առկայությունը առավել խոցելի է դարձնում ոլորտը հնարավոր արտաքին ցնցումների նկատմամբ, սա էլ իր հերթին, վտանգում է ոլորտի երկարաժամկետ կայունությունը:

27. 2015 թվականին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության տրամադրած վերջին 5 տարվա տնտեսական տվյալները վկայում են, որ գոյություն ունեցող մետաղական հանքերից միայն երկուսը կամ երեքն են աշխատում տևական և կայուն շահույթով (այդ թվում գերիշխող հանքարդյունաբերողը՝ ԶՊՄԿ-ն): Հանքարդյունահանման թույլտվություններ ունենցող փոքր ընկերությունների մեծ մասը նվազ շահութաբեր կամ վնասով աշխատող ընկերություններն են: Նրանք նույնիսկ այն տարիներին, երբ այն համարվում էր ապրանքների պատմականորեն բարձր գների շրջան, աշխատել են վնասով, ավելին որոշ ընկերությունների կողմից աղտոտման կանխարգելման և շրջակա

միջավայրի կառավարման համար համարժեք միջոցներ չեն հատկացվել: Իսկ այն հանքարդյունաբերական ծրագրերը, որոնք սովորաբար վնասներ են կրում, չեն կարող համարվել տնտեսապես կայուն:

28. Այսօր իրականացվող օգտակար հանածոների արդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության հետ կապված աշխատանքները մեծ մասամբ հիմնվում են խորհրդային տարիներին կատարված աշխատանքների վրա: Վերջին մի քանի տասնյակ տարիների ընթացքում շատ քիչ բան է արվել երկրաբանական հետախուզման և նոր հանքավայրեր բացահայտելու առումով, ինչը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակի, երբ հանքարդյունաբերության ոլորտում պաշարների արդյունահանման անընդհատությունը և արդյունահանման նույն մակարդակը չապահովվի: Սա ինքնին վտանգում է ոլորտի տնտեսական կայունությունը, ինչպես նաև Հայաստանի ամբողջ տնտեսությունը, եթե հաշվի առնենք վերջինիս համար ոլորտի հարաբերական կարևորությունը:

29. Երկրի տնտեսության մյուս ոլորտների հետ կապերի ստեղծումը լավ միջոց է տնտեսական կատարողականի և կայունության ամրապնդման համար: Կապերն ու «Հայաստանյան համատեքստը» առկա են, սակայն կան նաև ազդակիր համայնքներում և հանրապետության այլ վայրերում գործող տնտեսվարողների մասնակցությունը հանքարդյունաբերության ոլորտում ընդլայնելու մեծ հնարավորություններ: Կարևոր է նշել, որ այն դերը, որը կարող են ստանձնել տեղացի ձեռներեցները, կարող է ներառել նաև ավելի շատ գիտելիքահենք ծառայություններ, ինչպիսիք են տեխնիկական խորհրդատվությունը և երկրաբանական հետախուզման հետ կապված ծառայությունները:

30. Պինդ օգտակար հանածոների արդյունահանման գործող ծրագրերից ոչ մեկը չի կարելի համարել էկոլոգիապես կայուն: Հիմնական խնդիրները պայմանավորված են հետևյալով.

1) պինդ օգտակար հանածոներ արդյունահանող փոքր ընկերությունները, որոնք ընդգրկված են խորհրդային շրջանում հայտնաբերված հանքավայրերի վատ կառավարվող արդյունահանման/ հետախուզման ծրագրերում, զգալի վնաս են հասցնում շրջակա միջավայրին.

2) հանքերի գործունեության և վերամշակման աշխատանքների հետևանքով առկա է շրջակա միջավայրի վրա զգալի շարունակական աղտոտվածություն.

3) ընդհանուր առմամբ, ընդերքօգտագործող ընկերությունները չունեն համապատասխան ծրագրեր, և նրանց կողմից չեն հատկացվում համապատասխան ֆինանսական միջոցներ հանքերի տեղամասերի, պոչամբարների վերականգնման և մելիորացիայի համար: Ընդերքօգտագործող ընկերությունների կողմից ներկայացվող հանքերի փակման ֆինանսական երաշխիքները և շրջակա միջավայրի պահպանման դրամագլխին հատկացվող միջոցները բավարար չեն նպատակին ծառայելու համար, իսկ նախկինում (նախքան մասնավորեցումը) պետության կողմից հանքավայրերի

շահագործման արդյունքում կառուցված և շահագործված պոչամբարները, որոնք մասնավորեցումից հետո տրամադրվել են նոր սեփականատերերին, չունեն պետության և նոր սեփականատիրոջ միջև պարտավորությունների բաշխման ֆորմալ կարգավորում.

4) բարձր սեյսմիկ ռիսկի և տարածքի անկայունության հետ կապված ընդհանուր ռիսկի պայմաններում չափազանց մեծ է վտանգը, որ պոչամբարները կարող են փլվել կամ վթարվել պոչամբարների շինարարության ժամանակ ոչ համարժեք մեթոդի կիրառման հետևանքով (հին՝ «վերընթաց բարձրացման» մեթոդով նախագծերի կիրառում).

5) պինդ օգտակար հանածոների արդյունահանման ոլորտում շահագործված տարածքների վրա սովորաբար վերականգնման կամ հողաբարելավման զգալի աշխատանքներ չեն կատարվում.

6) հանքավայրերի պաշարների հաստատման և տնտեսական յուրացման արդյունավետության գնահատման ժամանակ չեն հաշվի առնվում հնարավոր բնապահպանական ռիսկերը:

31. Բնապահպանական օրենքները և կանոնակարգերը, որոնք կարող են լուծել վերոնշյալ խնդիրները պատշաճ կերպով չեն իրականացվում:

32. Հանքարդյունաբերությունը ստեղծում է աշխատատեղեր և ապահովում ապրուստի միջոցներ շատ բնակավայրերում, որտեղ այլ բնույթի տնտեսական հնարավորությունները սակավ են: Ավելին, որոշ համայնքներում հանքարդյունաբերական աշխատանքները վայելում են տեղական համայնքների բավական լուրջ օժանդակությունը: Միաժամանակ չի կարելի ասել, որ Հայաստանում համայնքներն ընդերքօգտագործողներին տվել են անվերապահ «սոցիալական արտոնագրեր»: Այդ մեծ աջակցության բացակայությունը, իր հերթին, կարող է բխել բնապահպանական և տնտեսական իրական խնդիրներից: Գերիշխող գաղտնիության մշակույթը, որը տիրում է ոլորտում, խոչընդոտում է հասարակության բովանդակալից մասնակցությունը, ինչպես նաև ճշմարիտ և փաստացի տեղեկատվության վրա հիմնված որոշումների կայացմանը: Հետևաբար անհրաժեշտ են նախաձեռնություններ՝ ուղղված նման տվյալների հասանելիության ապահովմանը հանրության կողմից վերահսկողության իրականացման համար:

33. Չնայած Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում կան զգալի թվով որակյալ մասնագետներ, սակայն մասնագիտացված հմտությունների բարելավման պահանջ կա : Կառավարման բնագավառում տեղացիների կարողությունների պակասը հնարավորություն չի տալիս ապահովելու աշխատանքների սոցիալական կայունությունը:

34. Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Հայաստանում մետաղական օգտակար հանածոներ արդյունահանող ընկերությունների մեծ մասը լիարժեք կերպով չի ապահովում կայունության բոլոր երեք տարրերի պահանջները միաժամանակ, իսկ առկա տվյալները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ նույն իրավիճակն է նաև ոչ մետաղական օգտակար հանածոներ արդյունահանողների մեծ մասի մոտ: Դրանից բացի, կան դեպքեր (հատկապես

մետաղական օգտակար հանածոներ արդյունահանող փոքր ընկերությունների շրջանում), երբ կայունությունը չի ապահովվում բոլոր երեք բաղադրիչների առումով: Այդ թերությունների պատճառները բազմազան են, ներառյալ ընկերությունների անպատասխանատու վարքագիծը, ինչպես նաև աշխատանքների վերահսկողության և հսկողության համար պատասխանատու կառույցների փոխհամաձայնեցված գործողությունների իրավական դաշտի բացակայությունը, ինչպես նաև տեղի ունեցող խախտումների դիմաց համարժեք պատասխանատվության ենթարկելու գործիքների բացակայությունը կամ ոչ բավարար լինելը:

35. Ենթադրվում է, որ Հայաստանում հանքարդյունահանման ծրագրերի շուրջ տարաձայնությունների զգալի մասը պայմանավորված է գիտելիքների և տվյալների, ինչպես նաև ժամանակակից հանքարդյունահանման լավագույն միջազգային փորձի և տեխնոլոգիաների իմացության պակասով: Ինչ վերաբերում է միջազգային լավագույն փորձին, ապա Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը միանալու (ԱՃԹՆ) թեկնածության հայտի կազմման ընթացիկ աշխատանքները և ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրումից բխող հետագա գործողություններն էապես կնպաստեն ոլորտի առավել խոր ըմբռնմանը և Հայաստանի Հանրապետության տարածքում ավելի ժամանակակից, ապահով և շրջակա միջավայրի համար նվազ վնասակար ազդեցություն ունեցող տեխնոլոգիաների ներդրման հնարավորություններին:

V. ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

36. Սույն հայեցակարգի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանը՝ հիմք հանդիսանալով հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության և քաղաքականության մշակման համար: Ոլորտի կայուն զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը, թափանցիկության բարձրացումը, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, պատասխանատու ներդրումների ներգրավումը, բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծումը, օրենսդրության բարելավումը, նորագույն տեխնոլոգիաների ներդրումը և մի շարք այլ խնդիրներ իրենց լուծումը պետք է գտնեն նախ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգի, ապա ռազմավարության ու քաղաքականության մեջ:

37. Հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանը խոչընդոտող խնդիրները կարող են խմբավորվել հետևյալ կերպ.

1) հանքարդյունաբերության ոլորտի համապարփակ քաղաքականության և ռազմավարության բացակայություն - ոլորտի զարգացման քաղաքականության առկայությունը թույլ կտա ի հայտ բերել համեմատական առավելությունները, պարզել

ներդրումների առաջնահերթ ոլորտները և հասցնել նվազագույնի ոլորտին առնչվող օրենքներում առկա բացերը,

2) խնդիրներ իրավական դաշտում – ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը չեն համապատասխանում կայուն զարգացման և էկոհամակարգային կառավարման մոտեցման սկզբունքներին, ոչ ամբողջական են ընկերությունների պատասխանատվության և հաշվետվողականության, ընդերքօգտագործման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ հողամասերի նկատմամբ իրավունքների ձեռքբերման հետ կապված օրենսդրական հիմքերը, երկրաբանական տեղեկատվության հասանելիության ապահովման օրենսդրական հիմքեր նույնպես ոչ լիարժեք են,

3) ինստիտուցիոնալ դաշտում առկա բացեր - կա անհրաժեշտություն վերանայելու և ամբողջականացնելու ոլորտին առնչվող գործառույթներ ունեցող պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակները, ստեղծել օրենսդրական հիմքեր համաձայնեցված և փոխլրացնող գործառույթների համար, ապահովել կարողությունների զարգացում, որը վերաբերում է ինչպես տեխնիկական, այնպես էլ մարդկային կարողություններին,

4) բացթողումներ շրջակա միջավայրի կառավարման ոլորտում – առկա օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը ամբողջությամբ չեն ծածկում շրջակա միջավայրի պահպանության, պաշտպանության և էկոհամակարգային կառավարման մոտեցման հարցերը: Անհրաժեշտ է վեր հանել ջրային ռեսուրսների կառավարման հիմնահարցերը, մշակել և ներդնել կենսաբազմազանությանը հասցվող վնասի գնահատմանը և դրանց նվազեցմանն ու վերականգնմանը վերաբերող օրենսդրություն, բարելավել հանքերի փակման և հանքարդյունաբերության հետևանքով խախտված ռեկուլտիվացման համար պահանջվող ֆինանսական երաշխիքների հաշվարկման մեխանիզմները, մշակել լքված, ապօրինի, ընդերքօգտագործման իրավունքը դադարեցված, կոնսերվացված հանքերի կառավարման պլանները, որոնք իրենց մեջ պետք է ներառեն նաև անհրաժեշտ ֆինանսական հաշվարկները և ֆինանսավորման հնարավոր աղբյուրները, ուսումնասիրել և վերլուծել ընդերքօգտագործման թափոնների վերամշակման հեռանկարները Հայաստանում: Ընդերքօգտագործման ոլորտում շրջակա միջավայրի պահպանության հետ կապված բացթողում է համարվում բնապահպանական միջոցառումներով նախատեսված շրջակա միջավայրի հիմնական բաղադրիչների (հող, օդ և այլն) մոնիթորինգի իրականացման և հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ պահանջների բացակայությունը: Այդ տվյալների բացակայությունը բացասաբար է անդրադառնում ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից համապատասխան որոշումների կայացման, ինչպես նաև ընդերքօգտագործման ոլորտի շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցության ճշգրիտ գնահատման վրա,

5) ֆինանսական դաշտում առկա խնդիրները վերաբերում են ինչպես պետությանը, այնպես էլ ընկերություններին – անհրաժեշտ է ֆինանսական կայունության վերաբերյալ երաշխիքների տրամադրման դրույթների ամրագրում, հարկային, ֆիսկալ գործիքների ու մեխանիզմների բարելավում՝ ոլորտից առավել եկամուտների ապահովման նպատակով, ապահովել ոլորտից ստացվող եկամուտների բաշխման թափանցիկությունը,

6) խնդիրներ սոցիալ-տնտեսական դաշտում – ուսումնասիրել և մշակել հանքարդյունաբերության ազդեցությունը համայնքների զարգացման, Երևանից դուրս աշխատատեղերի ստեղծման և արժեշղթաների ձևավորման վրա: Առանձնակի ուշադրություն է անհրաժեշտ դարձնել հանրային առողջությանը և աշխատանքի անվտանգությանը ներկայացվող պահանջներին,

7) պատասխանատու ներդրումների ներգրավման պակաս – ստեղծել բարենպաստ միջավայր ներդրումների ներգրավման ու պահպանման համար, քայլեր ձեռնակել ոլորտի առաջատար խոշոր ընկերություններին Հայաստան ներգրավելու համար, օրենսդրորեն ամրագրել հավասար, ոչ խտրական և կանխատեսելի պայմաններ թե՛ օտարերկրյա և թե՛ տեղական ներդրողների համար,

8) պետական երկրաբանական ուսումնասիրությունների ոչ լիարժեք իրականացում- մշակել համապատասխան մեխանիզմներ երկրաբանական նոր տվյալների հավաքագրման և դրանց հետագա կառավարման համար, աշխատանքներ իրականացնել օգտակար հանածոների նոր պաշարների հայտնաբերման նպատակով ներդրումներ ներգրավման համար:

VI. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

38. Հանքարդյունաբերության ոլորտը հանդիսանալով Հայաստանի Հանրապետության արդյունաբերության կարևոր ոլորտներից մեկը դեռևս չունի հստակ քաղաքականություն և ռազմավարություն, որը թույլ կտա ունենալ տեսլական և իրականացնել կոնկրետ գործողություններ, վերը նշված խնդիրների լուծման և ոլորտի կայուն զարգացում ապահովելու համար: Ուստի, որպես առաջնային լուծում առաջարկվում է մշակել հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարություն ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին՝ կառավարություն, ոլորտի հետ առնչվող ճյուղային նախարարություններ, քաղաքացիական հասարակություն, հանքարդյունաբերող կազմակերպություններ, պոտենցիալ ներդրողներ, ազդակիր համայնքներ, միջազգային դոնոր կազմակերպություններ և այլն: Ռազմավարության մշակման համար նախ անհրաժեշտ է կատարել որոշակի ուսումնասիրություններ, վերանայել տարբեր ժամանակահատվածներում արդեն իրականացված ոլորտի վերաբերյալ հետազոտությունները, կազմակերպել հանդիպում - հարցազրույցներ, կլոր սեղաններ և հանրային քննարկումներ վերը նշված շահագրգիռ կողմերի հետ, ուսումնասիրել միջազգային փորձը և ներգրավել համապատասխան փորձագետներ: Վերոնշյալ ախտորոշիչ ուսումնասիրությունների

արդյունքում մշակվելիք ռազմավարական փաստաթղթում կտրվեն ոլորտի կայուն զարգացման համար խոչընդոտ հանդիսացող՝ բացահայտված խնդիրների լուծման ուղղությունները և բարեփոխումները ապահովելու համար ֆինանսական գնահատականը: Ռազմավարության մշակման համար կպահանջվի մեկ տարուց ավել ժամանակահատված: Այն կներառի 5-10 տարիների ռազմավարական գործողությունները:

39. 2016 թվականին Համաշխարհային Բանկի կողմից իրականացված Հանքարդյունաբերության ոլորտի ռազամավարական գնահատում զեկույցում ներկայացվել են ոլորտի զարգացման ուղղությունները և հիմնախնդիրները, մանսավորապես.

1) ոլորտի բնապահպանական և սոցիալական գնահատում – բնապահպանական և սոցիալական հիմնական հարցերի գնահատում և գործնական առաջարկների ներկայացում՝ ինչպես կարող են կարգավորվել բացահայտված բացասական իրողությունները և ընդլայնվել զարգացման դրական հնարավորությունները.

2) լեռնատեխնիկական ռիսկի գնահատում - առկա լեռնատեխնիկական կառուցվածքների և Հայաստանում կիրառվող նախագծման մեթոդների հետ կապված ռիսկերի բացահայտում և նկարագրություն: Առաջարկներ բացահայտված բարձր ռիսկերի նվազեցմանն ուղղված նորմատիվային հնարավոր փոփոխությունների մասին և դրանց իրագործելիության գնահատում.

3) ֆինանսատնտեսական գնահատում - Հանքարդյունահանման ոլորտի հարկաբյուջետային համակարգի ընդհանուր վերլուծություն, ինչպես նաև տարբեր ծրագրերի տնտեսական կենսունակության գնահատում, տեղական տարածաշրջանային և ազգային տնտեսություններում հանքարդյունահանման տարբեր ծրագրերի ունեցած ներդրման գնահատում.

4) տեխնոլոգիաների գնահատում - Հայաստանում տարբեր հանքարդյունաբերական ծրագրերում կիրառվող տեխնոլոգիաների գնահատում և այն աշխատանքների բացահայտում որոնք պահանջում են մեխանիզացման ավելի բարձր մակարդակ և բարելավված կառավարում.

5) առողջ և ապահով պայմանների ուսումնասիրություն - Հայաստանում հանքարդյունաբերական տարբեր ծրագրերում գոյություն ունեցող այն խնդիրների գնահատում որոնք վերաբերում են աշխատանքի առողջ և ապահով պայմաններին.

6) ինստիտուցիոնալ համակարգի ուսումնասիրություն – Առկա ինստիտուտների, նրանց գործառույթների , սահմանված ընթացակարգերի վերլուծություն, այդ թվում՝ մինչ հանքարդյունահանման, հանքարդյունահանման և հանքարդյունահանմանը հաջորդող փուլերի համար.

7) ընդերքօգտագործման իրավունքը դադարեցված, լքված, ապօրինի և այլևս արդյունահանման համար չօգտագործվող հանքավայրերի և տեղամասերի ուսումնասիրություն - Չօգտագործվող հանքավայրերի կամ նրա տեղամասերի հետագա օգտագործման հնարավորությունների, ինչպես նաև բնապահպանական ռիսկերի գնահատում, կապված խախտված հողերի վերականգնման հետ:

40. Վերոնշալ և այլ հիմնախնդիրների լուծման համար իրականացվելիք ախտորոշիչ ուսումնասիրությունների արդյունքում մշակված ռազմավարական փաստաթղթում կներկայացվեն ոլորտի կայուն զարգացման համար խոչընդոտ հանդիսացող խնդիրների լուծման մանրամասն ուղղությունները, ինչպես նաև հանքարդյունաբերության ոլորտում

բարեփոխումներ ապահովելու համար միջոցառումները, ֆինանսական գնահատականները և ակնկալվող արդյունքները:

VII. ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

41. Հանքարդյունաբերության ոլորտի հայեցակարգի, ապա քաղաքականության և ռազմավարության մշակումը թույլ կտա ապահովել ոլորտի կայուն զարգացում այն դարձնելով ՀՀ տնտեսության շարժիչ ուժերից մեկը: Բացի այդ, բոլոր շահագրգիռ կողմերը կունենան հստակ տեսլական և իրենց գործողությունները կհամապատասխանեցնեն դրան: Ոլորտի բարեփոխումներին զուգահեռ կբարձրանա պետական հատված - քաղաքացիական հասարակություն երկխոսությունը, վստահությունը պետական հատվածի և հանքարդյունաբերողների նկատմամբ, շահագրգիռ կողմերը առավել ակտիվ մասնակցություն կունենան որոշումների կայացման գործընթացներում:

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

42. Հայեցակարգում նշված խնդիրների ախտորոշիչ ուսումնասիրությունների իրականացման և ռազմավարության մշակման համար նախնական գնահատականով անհրաժեշտ է շուրջ 1 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, որոնք կիրականացվեն Համաշխարհային բանկի և դոնոր կազմակերպությունների կողմից տրվող դրամաշնորհների հաշվին:

IX. ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

43. Այսպիսով, հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգը կարևոր փաստաթուղթ է ոլորտի հետագա կայուն զարգացումն ապահովելու համար: Այն պետք է հիմք հանդիսանա ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակման համար: Առաջիկա տարիների ընթացքում հանքարդյունաբերության ոլորտում միջազգային շուկայում ակնկալվող վերելքի փուլին ակտիվորեն մասնակցելու համար անհրաժեշտ է այսօրվանից պատրաստվել դրան: Ոլորտի արդյունավետ քաղաքականության և ռազմավարության մշակման համար անհրաժեշտ է համագործակցել և գործընթացներում ներգրավել բոլոր շահագրգիռ կողմերին, ինչպես նաև մշտապես ուսումնասիրել և հետևել միջազգային լավագույն փորձին: Ըստ նախնական հաշվարկների ոլորտի բարեփոխումները պլանավորելու համար անհրաժեշտ կլինի 1-1.5 տարի, ևս 5-10 տարի ռազամավարությամբ ամրագրված գործողությունների իրականացման համար: Ուսումնասիրությունների և ռազմավարության մշակման համար անհրաժեշտ ֆինանսավորումը կիրականացվի Համաշխարհային բանկի և դոնոր կազմակերպությունների կողմից տրվող դրամաշնորհների հաշվին: